# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 19.03.2018թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի**

**թիվ ՍՑ-ԱՄ-2018/08**

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 16.01.2018թ. թիվ 03/26-3/438-18 գրությամբ «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 12.01.2018թ. թիվ ԴՎԱ/58 (այսուհետ՝ Պատվիրատու) գրության հիման վրա, 16.01.2018թ. թիվ 03/26-3/438-18 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

## 2. «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 18.01.2018թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/634-18 գրությամբ կարծիք ստանալու նպատակով դիմել է «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ին:

Ի պատասխան վերոհիշյալ գրության՝ Ընկերությունը 02.03.2018թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

««Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտ է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Դեղորայքի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ 9/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ):

Ընկերությունը՝ Ընթացակարգի թիվ 1-ին, 4-րդ և 6-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից, այնուհետև սահմանված եռօրյա ժամկետում ներկայացրել է հրավերով պահանջված հավելված 6-ը և 6.1-ը:

Սակայն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ 9/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը որակվել են հրավերի պահանջներին չհամապատասխանող և «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ին տրամադրվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ժամկետ՝ անհամապատասխանությունները շտկելու համար: Ընկերությունը սահմանված ժամկետում ներկայացրել է նշված հավելվածները՝ անհրաժեշտ շտկումներով հանդերձ, սակայն գնահատող հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը, այն պատճառաբանությամբ, որ կատարված շտկումները ոչ լիարժեք են (արձանագրված են գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 5 արձանագրության 1.2 կետով): Մասնավորապես, հիմքում դրվել է 6.1 հավելվածում հրավերի տեխնիկական բնութագրի «Ծանոթություն» մասով սահմանված դրույթները չներառելու, ինչպես նաև 6.1 հավելվածում դեղաձևը չնշելը:

*Հավելված 6.1-ում «Ամպիցիլին (ամպիցիլին նատրիում) մասով դեղաձևը նշված չլինելու և այդ հիմքով Ընթացակարգի հրավերի պահանջներին անհամապատասխան գնահատելու վերաբերյալ.*

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումը:

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի Պայմանագրի նախագծի հավելված 1-ը՝ տեխնիկական բնութագիրը ունի հետևյալ կառուցվածքը.

| ՀՀ/հ | Ապրանքի CPV անվանում | Միջազգային համընդհանուր (ջեներիկ) կամ | Տեխնիկական հատկանիշներ | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | ԾԱԳՄԱՆ ԵՐԿԻՐԸ |
|---|---|---|---|---|---|---|

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | ակտիվ բաղադրատարրերի անվանումները | | | | | |
| | | | Դեղաձևը | Դեղաչափը և թողարկման ձևը (փաթեթավորումը) | | | |
| | Ամպիցիլին j01ca01, s01aa19 | Ամպիցիլին (ամպիցիլինի նատրիում), ampicillin (ampicillin sodium) | Դեղափոշի ներարկման լուծույթի | 1000մգ, ապակե սրվակներ | | | |

Այսպիսով, Պայմանագրի նախագծի հավելված 1-ում՝ տեխնիկական բնութագրում, առկա է առանձին՝ «Տեխնիկական հատկանիշները» վերտառությամբ բաժին, որտեղ անհրաժեշտ է նշել դեղաձևը, դեղաչափը և թողարկման ձևը:

Հրավերով նախատեսված Հավելված 6.1-ը, ըստ հրավերով սահմանված կարգի, անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ կարգով.

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | անվանումը | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | ծագման երկիրը | տեխնիկական բնութագրերը |
| | | | | | |

Վերոհիշյալ Հավելված 6.1-ի օրինակելի ձևի ուսումնասիրությունից հստակ երևում է, որ Ընթացակարգի հրավերով՝ Հավելված 6.1-ով, մասնակցից չի պահանջվել ներկայացնել դեղաձևը: Ավելին, Պայմանագրի նախագծի հավելված 1-ում՝ տեխնիկական բնութագրում, դեղաձևը նախատեսված է «Տեխնիկական հատկանիշներ» բաժնում, իսկ ինչպես երևում է, Հավելված 6.1-ում բացակայում է «Տեխնիկական հատկանիշներ» վերտառությամբ բաժին, որի առկայության դեպքում «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն պարտավոր կլիներ լրացնել «Տեխնիկական հատկանիշներ» վերտառությամբ բաժնով պահանջվող՝ դեղաձևը, դեղաչափը և թողարկման ձևը:

Ըստ երևույթի, ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից նույնականացվել են «Տեխնիկական բնութագիր» և «Տեխնիկական հատկանիշներ» վերտառությամբ բաժինները, սակայն անհրաժեշտ է նշել, որ Պայմանագրի նախագծի հավելված 1-ում՝ տեխնիկական բնութագիրը բաղկացած է մի շարք բաժիններից՝ անվանումից, տեխնիկական

հատկանիշներից, ապրանքային նշանից, արտադրողի անվանումից, ծագման երկրից, իսկ Հավելվածում 6.1-ում Հրավերով առանձին նշվել է և «Տեխնիկական բնութագիր» բաժինը, և դրան զուգահեռ առանձնացվել են նաև Պայմանագրի նախագծի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագրի բաղկացուցիչ մաս կազմող այլ բաժիններ՝ ի դեմս անվանման, ապրանքային նշանի, արտադրողի անվանման, ծագման երկրի և այլն: Մինչդեռ, ինչպես նշվել է, անվանման, ապրանքային նշանի, արտադրողի անվանման, ծագման երկրի բաժինները, ըստ Պայմանագրի նախագծի հավելված 1-ի, հանդիսանում էին տեխնիկական բնութագիրը բաղկացուցիչ մաս, ուստի և Հավելված 6.1-ում չէին կարող առանձնացվել «Տեխնիկական բնութագիր» բաժնից և չէին կարող նշվել որպես առանձին բաժիններ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերության կողմից ներկայացված Հավելված 6.1-ը («Ամպիցիլին (ամպիցիլին նատրիում) մասով դեղաձև չպարունակելու մասով) որակվել է հրավերի պահանջներին չհամապատասխանող և Կարգի 47-րդ կետի հիմքով «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ին տրամադրվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ժամկետ՝ անհամապատասխանությունը շտկելու համար: Մինչդեռ, ինչպես նշվել է, Կարգի 47-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցին տրվում է ներկայացված փաստաթղթում շտկում կատարելու հնարավորություն միայն այն դեպքում, երբ ներկայացված փաստաթղթում արձանագրվում է հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, իսկ վերոհիշյալ վերլուծությունից ուղղակիորեն հետևում է, որ Հրավերով նախատեսված Հավելված 6.1-ի օրինակելի ձևը չի պարունակում որևէ պահանջ դեղաձև նշելու վերաբերյալ: Ուստի նման պայմաններում խոսք չի կարող լինել «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած Հավելված 6.1-ի Ընթացակարգի հրավերի պահանջներին չհամապատասխանելու մասին, ուստի և խոսք չի կարող լինել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից այս հիմքով Կարգի 47-րդ կետի պահանջների կիրառման մասին:

Ըստ Հավելված 6.1-ի «Ծանոթություն» բաժնի՝ մասնակցի առաջարկում դեղաձևի թողարկման ձևը (փաթեթավորումը) կարող է ներկայացվել ՀՀ գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր) առկա տվյալ դեղաձևի ցանկացած փաթեթավորմամբ: ՀՀ գրանցված դեղերի պետական գրանցամատյանի (ռեեստր) ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Ամպիցիլին (ամպիցիլին նատրիում, ն/աղ) մասով ՀՀ-ում գրանցված միակ

դեղաձևը հանդիսանում է դեղափոշի ներարկման լուծույթի, ինչը և հանդիսացել է պահանջվողը տվյալ ընթացակարգի շրջանակներում: Ուստի նման պայմաններում «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված Ամպիցիլինը (ամպիցիլին նատրիում, ն/աղ) պետք է հանդիսանար դեղափոշի ներարկման լուծույթ և չէր կարող այլ դեղաձև ունենալ: Ուստի գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ձևական պահանջների պահպանման նպատակով մերժվել է «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ին իրավունք տրամադրելը:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումը: Մինչդեռ «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելից, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման սկզբունքը: Մասնավորապես, Ընթացակարգի 1-ին չափաբաժնով «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն առաջարկել է 4 678 000 ՀՀ դրամ, իսկ հաղթող ընկերությունը՝ 6 071 520 ՀՀ դրամ, 4-րդ չափաբաժնով «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն առաջարկել է 4 950 000 ՀՀ դրամ, իսկ հաղթող ընկերությունը՝ 5 250 000 ՀՀ դրամ, 6-րդ չափաբաժնով «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն առաջարկել է 4 480 000 ՀՀ դրամ, իսկ հաղթող ընկերությունը՝ 5 082 000 ՀՀ դրամ: Այսպիսով, միայն այս երեք չափաբաժիններով պետության կորուստը կազմում է 2 295 520 ՀՀ դրամ:

*Ներկայացված Հավելված 6-ը և Հավելված 6.1-ը էլեկտրոնային թվային ստորագրությամբ վավերացված չլինելու հիմքով մասնակցի հայտը Ընթացակարգի հրավերի պահանջներին անհամապատասխան գնահատելու վերաբերյալ*

Մրցույթի Հրավերի 2-րդ մասը նախատեսում է երկու առանձին հասկացություն՝ ընթացակարգի հայտ և առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթեր:

Մասնավորապես, Հրավերի «ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀՐԱՀԱՆ»-ի 2-րդ բաժնի 2-րդ կետով սահմանված են այն փաստաթղթերը, որոնցից բաղկացած է հայտը, դրանք են՝ հավելված 1, 2, 2.1, 3, 4, 5 և 10-ը: Իսկ նույն 2-րդ բաժնի 3-րդ կետով սահմանվում են առաջին տեղ զբաղեցնող մասկացի կողմից պահանջվող փաստաթղթերը, որոնց մեջ են մտնում նաև Հավելված 6 և 6.1-ը:

Համաձայն 'Գնումների մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև մրցույթի հրավերի պահանջների՝ մանակիցը հայտը ներկայացնում է մինչև հայտերի բացման նիստը, այսինքն՝ հայտեր բացվելուց հետո ներկայացվող փաստաթղթերը չեն կարող ընդունվել գնահատող հանձնաժողովի կողմից: Միայն հայտերը բացվելուց հետո, երբ մասնակիցը զբաղեցնում է առաջին տեղը, ներկայացվում են հրավերի 2-րդ մասի 3-րդ կետով սահմանված որակավորումը հիմնավորող փաստաթղթերը (նաև Հավելված 6 և 6.1-ը), որոնք էլեկտրոնային համակարգում ներառված չեն հայտի կազմի մեջ:

Կարգի 32-րդ կետի 12-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Այս պահանջը ներառված է նաև մրցույթի հրավերի 1-ին մասի 8.19 ենթակետում:

Վերը թվարկված փաստերից հստակ երևում է, որ մասնակիցը էլեկտրոնային փոստի միջոցով տեղեկությունները /փաստաթղթերը/ ուղարկում է էլեկտրոնային թվային

ստորագրությամբ կամ բնօրինակ փաստաթղթից արտատպված /սկանավորված/ տարբերակով, ինչը և կատարել է Ընկերությունը Հավելված 6-ի և Հավելված 6.1-ի դեպքում:

Նման պայմաններում, երբ ոչ գնումների մասին ՀՀ օրենսդրությունը, ոչ էլ Ընթացակարգի հրավերը չի պահանջում առաջին տեղ զբաղեցնող մասնակցի կողմից պահանջվող փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելը, ուստի գնահատող հանձնաժողովը, Կարգի 47-րդ կետի հիմքով, իրավունք չուներ պահանջել Ընկերությունից Հավելված 6-ում և Հավելված 6.1-ում կատարել համապատասխան շտկում, այն է՝ հաստատել վերոհիշյալ փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ, և այնուհետև, արձանագրել, որ ընկերությունը արձանագրված անհամապատասխանությունները շտկել է թերի:

«Վարչարարության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ վարչարարություն իրականացնելիս՝ վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը»:

Ամփոփելով վերագրյալը, Ընկերությունը գտնում է, որ նման պայմաններում «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն թույլ չի տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-րդ մասի 6-րդ կետի «ա» պարբերությամբ նախատեսված խախտում, քանզի հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունները ընկերության կողմից շտկվել են, իսկ իբրև թե չշտկված անհամապատասխանությունների մասով Պատվիրատուն «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ին ծանրաբեռնել է այնպիսի պարտականություններով, որոնք կրում են ձևական պահանջների պահպանման նպատակ:

Ընկերությունը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է հաշվի առնել նշված փաստարկները և «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ին չվերագրել Օրենքի 6-րդ հոդվածի 1-րդ մասի 6-րդ կետի «ա» պարբերությամբ նախատեսված խախտումը և ընկերությանը չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

«Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 23.01.2018թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն բողոք է ներկայացրել Խորհրդին, որը ներկայումս քննվում է ԳԲԽ-ԱՄ-2018/01 ծածկագրի ներքո և խնդրել է Խորհրդին Ընկերությանը Ցուցակում ներառելու վերաբերյալ քննարկումները հետաձգել մինչև ԳԲԽ-ԱՄ-2018/01 բողոքի վերաբերյալ որոշման ընդունումը:

Խորհուրդը բավարարել է վերջինիս միջնորդությունը:

**3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 12.01.2018թ. թիվ ԴՎԱ/58 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/1» ծածկագրով ընթացակարգին հայտ էին ներկայացրել թվով 13 մասնակիցներ, այդ թվում՝ «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն:

«Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից ընթացակարգի 1-ին, 4-րդ, 6-րդ չափաբաժինների մասով: Գնահատող հանձնաժողովի առաջարկի հիման վրա Ընկերությունը սահմանված ժամկետում և կարգով ներկայացրել է ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3.1 կետով նախատեսված որակավորման փաստաթղթերը, որոնց գնահատման արդյունքում հանձնաժողովը գտել է, որ «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ:

Ընկերության կողմից շտկվել է արձանագրված անհամապատասխանությունների միայն մի մասը:

Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, մերժել է Ընկերության հայտը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 23.01.2018թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**4. <u>ՍՑ-ԱՄ-2018/08 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>**

ՍՑ-ԱՄ-2018/08 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Դեղորայքի» ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ 9/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.11.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետով կայացված որոշմամբ Հավելված 1-ի համաձայն՝ «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն Ընթացակարգի թիվ 1-ին, 4-րդ և 6-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

3. Նույն արձանագրության 4-րդ կետի 4.2 ենթակետով որոշվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

4. Ընկերության կողմից 6.1 հավելվածը՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, ներկայացվել է հետևյալ տեսքով.

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | անվանումը | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | ծագման երկիրը | տեխնիկական բնութագրերը |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ասկորբինաթթու | Վիտամին C 500մգ դեղապատիճ կամ դեղահատեր | Նոկի Ռեպլեկֆարմ | Հայաստան<br><br>Ռեպլեկֆարմ | 500մգ(20) պլաստիկե տարայում և (20/2x10/) բլիստերում |
| 4 | Պովիդոն յոդ. | Բետադինոկ լ-թ 10% 1000մլ | Նոկի | Հայաստան | 100մգ/մլ, 1000մլ, պլաստիկե 22հկ |
| 6 | Ամպիցիլին (ամպիցիլինի նատրիում) | Ամպիցիլին-ն/աղ 1գ N1 | Սինթեզ | Ռուսաստան | 1000 մգ, ապակե սրվակներ |

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.12.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետով արձանագրվել է, որ «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի (հավելված 6.1) լրացման կարգում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես.

• Ապրանքային նշան դաշտում լրացված են ցուցանիշներ, որոնք պետք է լրացված լինեին «Տեխնիկական բնութագրեր դաշտում», «Ծագման երկիր» դաշտում նշել առաջարկվող ապրանքի ծագման երկիրը: Անհրաժեշտ է սյունակները լրացնել վերնագրերին համապատասխան, ինչը նշված պահանջը հստակ սահմանված է ընթացակարգի հրավերով:

• Մասնակցի կողմից 1-ին չափաբաժնի մասով առաջարկվել է «Դեղապատիճ կամ դեղահատ» անհրաժեշտ է հստակեցնել առաջարկվող ապրանքի դեղաձևը:

• Բացակայում է 6-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի դեղաձևը

• Ներկայացված Հավելված 6-ը (առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմում) և Հավելված 6.1-ը (առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր) չեն համապատասխանում ընթացակարգի հրավերի 8.19 ենթակետով սահմանված պահանջին, նշված հայտարարությունները հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

• Մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում «Հավելված 6.1» ներառված չեն Ընթացակարգի հրավեի տեխնիկական բնութագրի «Ծանոթություն» մասով սահմանված հետևյալ դրույթները.

- Դեղամիջոցների մնացորդային պիտանելիության ժամկետները հանձման պահին պետք է համապատասխանեն ՀՀ կառավարության 02.05. 2013թ. թիվ 502-Ն որոշման 7-րդ կետի պահանջներին, մասնավորապես 2,5 տարի և ավելի պիտանելիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային ժամկետ /ա ենթակետ/, իսկ մինչև 2,5 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքերը՝ առնվազան պիտանելիության ժամկետի 2/3-ը /բ ենթակետ/:

- Մատակարարման ժամանակ անհրաժեշտ է ներկայացնել մատակարարված ապրանքատեսակների խմբաքանակի որակի սերտիֆիկատ:

6. Նույն արձանագրությամբ, հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը, հանձնաժողովը 22.12.2017թ. ժամը 11:35-ին կայացած նիստում որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները, որի վերաբերյալ Ընկերությունը պատշաճ կերպով ծանուցվել է:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 26.12.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 1-ին կետի 1.3 ենթակետով կայացված որոշմամբ, հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, մերժել է «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինիս կողմից ներկայացված փաստաթղթերում չշտկվեցին 22.12.2017թ. ծանուցմամբ պահանջված հետևյալ անհամապատասխանությունները.

• 6-րդ չափաբաժնի մասով մասնակից կողմից չնշվեց առաջարկվող ապրանքի դեղաձևը,

• շտկմամբ ներկայացված Հավելված 6-ը և Հավելված 6.1-ը հաստատված չէին էլեկտրոնային թվային ստորագրությամբ,

• շտկմամբ ներկայացված Հավելված 6.1-ում ներառված չէ ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի «Ծանոթություն մասով սահմանված դրույթները»:

8. «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն 08.01.2018թ. բողոք է ներկայացրել ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/1» ծածկագրով ընթացակարգի

շրջանակներում՝ վիճարկելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին վերը նշված որոշումը:

9. ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 26.01.2018թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/01 որոշմամբ մերժել է Ընկերության բողոքը

## 5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 16.01.2018թ. թիվ 03/26-3/438-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 12.01.2018թ. թիվ ԴՎԱ/58 գրությունը՝ կից փաստաթղթերով և «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի 02.03.2018թ. գրությունը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Նույն հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի և 6-րդ մասի համաձայն՝

5. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝

1) ***առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները)***:

2) ***հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին***, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

6. ***Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները***: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը՝

1) գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: ***Հայտը ներառում է*** մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ***ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.***

4) ***հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ)***:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ ***առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքային նշանն արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր)***:

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի

միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում **հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:**

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ ***առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝***

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) ***չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:***

Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ ***Հրավերով նախատեսվում է նաև, որ*** էլեկտրոնային եղանակով համարումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք

պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: ***Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում <u>Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ</u>***, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Այսպիսով, ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար դեղերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագրով (այսուհետ՝ Տեխնիկական բնութագիր) գնման ենթակա դեղերը 1-ին, 4-րդ և 6-րդ չափաբաժինների համար ներկայացված են հետևյալ տեսքով.

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-9/1— պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| Հ/հ | Ապրանքի CPV անվանում | Միջազգային համընդհանուր (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումները | Տեխնիկական հատկանիշներ | | ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԸ | ԱՐՏԱԴՐՈՂԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՇԱԳՄԱՆ ԵՐԿԻՐԸ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Դեղաձևը | Դեղաչափը և թողարկման ձևը (փաթեթավորումը) | | | |
| 1 | Վիտամիններ | Ասկորբինաթթու, ascorbic acid | Դեղապատիճներ, դեղահատեր | 500մգ; (20) պլաստիկե տարայում և (20/2x10/) բլիստերում | | | |
| 4 | Պովիդոն յոդ d08ag02, d09aa09, d11ac06, g01ax11, r02aa15, s01ax18 | Պովիդոն յոդ, povidone-iodine | Լուծույթ | 100մգ/մլ, ,1000մլ պլաստիկե շշիկ | | | |
| 6 | Ամպիցիլին j01ca01, s01aa19 | Ամպիցիլին (ամպիցիլինի նատրիում), ampicillin (ampicillin sodium) | Դեղափոշի ներարկման լուծույթի | 1000մգ, ապակե սրվակներ | | | |

*Տեխնիկական բնութագրի ներքևի հատվածում նշված է հետևյալը՝*

***Ծանոթություն.***

*- Դեղամիջոցների մնացորդային պիտանելիության ժամկետները հանձման պահին պետք է համապատասխանեն << կառավարության 02.05. 2013թ. թիվ 502-Ն որոշման 7-րդ կետի պահանջներին, մասնավորապես 2,5 տարի և ավելի պիտանելիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային ժամկետ /ա ենթակետ/, իսկ մինչև 2,5 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքները՝ առնվազան պիտանելիության ժամկետի 2/3-ը /բ ենթակետ/:*

*- Մատակարարման ժամանակ անհրաժեշտ է ներկայացնել մատակարարված ապրանքատեսակների խմբաքանակի որակի սերտիֆիկատ:*

*- Մասնակցի առաջարկում դեղաձևի թողարկման ձևը (փաթեթավորումը) կարող է ներկայացվել << գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր) առկա տվյալ դեղաձևի ցանկացած փաթեթավորմամբ /հիմք՝ << կառավարության 02.05.2013թ. թիվ 502-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչների 3-րդ կետի 1) ենթակետ:*

*- Մատակարարման վայրը՝ << ՊՆ 73014 զորամաս (ք. Աբովյան):*

Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/1» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող

ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Նույն հայտարարությամբ մասնակիցը պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/1» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 2-ի 3-րդ կետի 3.1 ենթակետով սահմանվել է, որ Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով, հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է ***իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի.***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.11.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետով կայացված որոշմամբ Հավելված 1-ի համաձայն՝ «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն Ընթացակարգի թիվ 1-ին, 4-րդ և 6-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից, որին առաջարկվել է ներկայացնելու Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

Ընկերության կողմից 6.1 հավելվածը՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, ներկայացվել է հետևյալ տեսքով.

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | անվանումը | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | ծագման երկիրը | տեխնիկական բնութագրերը |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ասկորբինաթթու | Վիտամին C 500մգ դեղապատիճ կամ դեղահատեր | Նոկի Ռեպլեկֆարմ | Հայաստան<br>Ռեպլեկֆարմ | 500մգ(20) պլաստիկե տարայում և (20/2x10/) բլիստերում |
| 4 | Պովիդոն յոդ. | Բետադինոկ լ-թ 10% 1000մլ | Նոկի | Հայաստան | 100մգ/մլ, 1000մլ, պլաստիկե 22հկ |
| 6 | Ամպիցիլին (ամպիցիլինի նատրիում) | Ամպիցիլին-ն/աղ 1գ N1 | Սինթեզ | Ռուսաստան | 1000 մգ, ապակե սրվակներ |

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.12.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետով արձանագրվել է, որ «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի (հավելված 6.1) լրացման կարգում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես.

• Ապրանքային նշան դաշտում լրացված են ցուցանիշներ, որոնք պետք է լրացված լինեին «Տեխնիկական բնութագրեր դաշտում», «Ծագման երկիր» դաշտում նշել առաջարկվող ապրանքի ծագման երկիրը: Անհրաժեշտ է այունակները լրացնել վերնագրերին համապատասխան, որի պահանջը հստակ սահմանված է ընթացակարգի հրավերով:

• Մասնակցի կողմից 1-ին չափաբաժնի մասով առաջարկվել է «Դեղապատիճ կամ դեղահատ» անհրաժեշտ է հստակեցնել առաջարկվող ապրանքի դեղաձևը:

• Բացակայում է 6-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի դեղաձևը

• Ներկայացված Հավելված 6-ը (առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմում) և Հավելված 6.1-ը (առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր) չեն համապատասխանում ընթացակարգի հրավերի 8.19 ենթակետով սահմանված պահանջին, նշված հայտարարությունները հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

• Մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում «Հավելված 6.1» ներառված չեն Ընթացակարգի հրավեի տեխնիկական բնութագրի «Ծանոթություն» մասով սահմանված հետևյալ դրույթները.

- Դեղամիջոցների մնացորդային պիտանելիության ժամկետները հանձման պահին պետք է համապատասխանեն ՀՀ կառավարության 02.05. 2013թ. թիվ 502-Ն որոշման 7-րդ կետի պահանջներին, մասնավորապես 2,5 տարի և ավելի պիտանելիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային ժամկետ /ա ենթակետ/, իսկ մինչև 2,5 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքները՝ առնվազան պիտանելիության ժամկետի 2/3-ը /բ ենթակետ/:

- Մատակարարման ժամանակ անհրաժեշտ է ներկայացնել մատակարարված ապրանքատեսակների խմբաքանակի որակի սերտիֆիկատ:

Նույն արձանագրությամբ, հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը, հանձնաժողովը 22.12.2017թ. ժամը 11:35-ին կայացած նիստում որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները, որի վերաբերյալ Ընկերությունը պատշաճ կերպով ծանուցվել է:

Ընկերության կողմից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացվել է 6.1 հավելվածի՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի, շտկված տարբերակը հետևյալ տեսքով.

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | անվանումը | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | ծագման երկիրը | տեխնիկական բնութագրերը |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ասկորբինաթթու | Վիտամին C 500 մգ դպճ | Նոկի | Հայաստան | 500մգ(20) պլաստիկե տարայում և (20/2x10/) բլիստերում |
| 4 | Պովիդոն յոդ. | Բետադինոկ լ-թ 10% 1000մլ | Նոկի | Հայաստան | 100մգ/մլ, 1000մլ, պլաստիկե 22հկ |
| 6 | Ամպիցիլին (ամպիցիլինի նատրիում) | Ամպիցիլին-ն/աղ 1գ N1 | Սինթեզ | Ռուսաստան | 1000 մգ, ապակե սրվակներ |

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 26.12.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 1-ին կետի 1.3 ենթակետով կայացված որոշմամբ, հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, մերժել է «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինիս կողմից ներկայացված փաստաթղթերում չշտկվեցին 22.12.2017թ. ծանուցմամբ պահանջված հետևյալ անհամապատասխանությունները.

- 6-րդ չափաբաժնի մասով մասնակից կողմից չնշվեց առաջարկվող ապրանքի դեղաձևը,
- շտկմամբ ներկայացված Հավելված 6-ը և Հավելված 6.1-ը հաստատված չէին էլեկտրոնային թվային ստորագրությամբ,
- շտկմամբ ներկայացված Հավելված 6.1-ում ներառված չէ ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի «Ծանոթություն մասով սահմանված դրույթները»:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Ընկերության կողմից ներկայացված Հավելված 6.1-ը (առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր) չի համապատասխանում ընթացակարգի հրավերով սահմանված պահանջին, այն է՝

- Ընթացակարգի հրավերի Պայմանագրի նախագծի հավելված թիվ 1-ի՝ տեխնիկական բնութագրի 6-րդ չափաբաժնով «Դեղաձևը» սյունակում սահմանվել է

«Դեղափոշի ներարկման լուծույթ», մինչդեռ «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ***շտկված տարբերակով ներկայացված*** հավելված 6.1-ի տեխնիկական բնութագիրը սյունակում 6-րդ չափաբաժնի մասով կրկին չի նշվել իր կողմից առաջարկվող ապրանքի դեղաձևը, որի պահանջը հստակ սահմանված է եղել Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով:

• Ինչպես նաև Ընկերության կողմից ***շտկմամբ ներկայացված*** Հավելված 6-ը և Հավելված 6.1-ը կրկին հաստատված չէին էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի պահանջը հստակ շարադրված է Ընթացակարգի հրավերի 8-րդ կետի 8.19 ենթակետով, ինչպես նաև Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետով:

Ինչ վերաբերում է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված այն անհամապատասխանությանը, որ Մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում «Հավելված 6.1» ներառված չեն Ընթացակարգի հրավեի տեխնիկական բնութագրի «Ծանոթություն» մասով սահմանված դրույթները, ապա սույն մասով Խորհուրդն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերով սահմանված չէ, որ տեխնիկական բնութագրի «Ծանոթություն» մասով սահմանված դրույթները հանդիսանում են պարտադիր պայմաններ և պետք է ներառվեն մասնակցի կողմից ներկայացվող 6.1 հավելվածում, ուստի Խորհուրդը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը սույն մասով արձանագրելով անհամապատասխանություն գործել է ոչ իրավաչափ:

Կարգի 47-րդ կետը սահմանում է, որ ***առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից*** փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ***ներկայացված՝*** ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ ***հրավերով նախատեսված փաստաթղթերի***, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի ***գնահատման արդյունքում*** **հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:**

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ ***առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝***

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) ***չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է,*** և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Այսպիսով, վերը նշված նորմերը հստակ սահմանում են, որ այն դեպքում, երբ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չի շտկվում, ապա հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը պատշաճ կերպով ծանուցված լինելով վերը նշված անհամապատասխանությունների մասին չի շտկել դրանք, ուստի Խորհուրդը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, մերժելով «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի հայտը գործել է իրավաչափ:

Այսպիսով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «ա» պարբերության համաձայն՝ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է*** պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է*** պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ ***գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը»:***

Վերոգրյալով պայմանավորված Խորհուրդը գտնում է, որ «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակում խախտել է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված ստանձնած պարտավորություն, որի հետևանքով Ընկերության հետագա մասնակցությունը նշված ընթացակարգին դադարեցվել է:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

# Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 16.01.2018թ. թիվ 03/26-3/438-18 գրությամբ «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01536316) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը բավարարել և «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ